ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավան համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (096) 11-00-44
էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

21.08.2017թ.

թիվ 196

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 11-ին կայացած /N9 հերթական/ նիստի որոշումները:

Միաժամանակ հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու << Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը սահմանելու մասին>> N41-Ն, <<Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին>> N42-Ն, <<Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին>> N43-Ն և <<Հողամասերի վարձակալության պայմանագրերի ժամկետներն երկարաձգելու մասին>> N44-Ն որոշումները սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 13/ տասներեք/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 11-ի հերթական նիստի /թիվ 9/ օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ	ՏՈՆՈՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿԱՐԵՆ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 11-ի
N40-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ

40. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

41. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

42. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

43. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

44. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

45. ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 15 ՇԵՆՔԻ ՔԱՄՈՒՑ ՎՆԱՍՎԱԾ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

46. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի թիվ 41– Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 156-րդ հոդվածի առաջին մասը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հունիսի 12-ի թիվ 01/07.1/2313-17 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին *որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ
ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու
2017 թվականի օգոստոսի 11-ի
N41-Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):
2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված Մերձավան համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահմանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օտգարոծման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:
3. Պարտադիր բարակարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:
4. Սույ կարգը սահմանվում է Մերձավան համայնքի վարչական տարածքում գտնվող՝
   1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող որ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ)սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
   2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
   3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,
   4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,
   5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա:
5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝
   1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,
   2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,
   3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:
5. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ինչպես նաև բարեկարգման տարրեի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

6. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի <<Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին>> N91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:
7. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝
   1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով,
   2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.
      ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբամանների առկայությունը,
      բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,
      գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,
      դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին,
      ե. Ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:
8. Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացվում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
9. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գոցազդի տեղադրումը, համաձայնեցվում է համայնքապետարանի հետ:
10. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:
11. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:
12. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝
   1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
   2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
   3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծից մինչև 5 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից 5-10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:
7) Առանձին դեպքերի համար կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համաձայնեցնելով դրանք Մերձավանի համայնքապետարանի հետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N42-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0,2175 հեկտար 3-րդ կարգի վարելահողը (լոտ 1, կադաստրային ծածկագիր 04-065-0607-0017):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 348 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 17 400 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 17 400 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

2. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0,1316 հեկտար 4-րդ կարգի վարելահողը (լոտ 2, կադաստրային ծածկագիր 04-065-0606-0010):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 156 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 7 800 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 7 800 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

3. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Երևանյան խճուղու թիվ 55/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության

0,0108 հեկտար խառը կառուցապատման հողամասի (լոտ3, կադաստրային ծածկագիր 04-065- 0032-0006):

Աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 208 000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 10 400 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 10 400 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

4.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

		Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՎԵՏԻՔ	ՏՈՆՈՅԱՆ			
ԱՐՏԱԿ	ԵՍԱՅԱՆ			
ԳԱԳԻԿ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ			
ԿԱՐԵՆ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՄԲԱՐՅԱՆ			
ՊԱՅՔԱՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՎՈԼՈԴՅԱ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N43-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, 81-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով, 99 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի նշանակության Երևանյան խճուղու 4-րդ նրբանցքի N9/1 հասցեում գտնվող 0,0042 հեկտար ընդհանուր օգտագործման հողամասը (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-065 – 1027-0001):

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին հաստատել 1000 ՀՀդրամ:

Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5% չափով՝ 50 ՀՀ դրամ:

Մրցույթի մասնակցության վճարի չափը 5 000 ՀՀ դրամ է:

5.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, մրցույթն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

		Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՎԵՏԻՔ	ՏՈՆՈՅԱՆ			
ԱՐՏԱԿ	ԵՍԱՅԱՆ			
ԳԱԳԻԿ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ			
ԿԱՐԵՆ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՄԲԱՐՅԱՆ			
ՊԱՅՔԱՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՎՈԼՈԴՅԱ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N44-Ն

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի երկրորդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով հողամասերի նկատմամբ կնքված վարձակալության պայմանագրերի 5-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 8,3 հեկտար չորրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2578177, կադաստրային ծածկագիր 04-065- 0503-0047/ նկատմամբ 2009 թվականի հունիսի 8-ին քաղաքացի Հրանտ Հովսեփի Մարգարյանի հետ կնքված վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2034 թվականի հունիսի 8-ը:

2. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների՝

1)4,81 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2344329, կադաստրային ծածկագիր 04-065- 0114-0011/,

2)1,21 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2344334, կադաստրային ծածկագիր 04-065- 0114-0007/,

3) 3,89 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2344336, կադաստրային ծածկագիր 04-065- 0114-0008/,

4) 9,87 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2344335, կադաստրային ծածկագիր 04-065- 0114-0010/ նկատմամբ 2007 թվականի փետրվարի 2-ին քաղաքացի Միքայել Արարատի Ջուլհակյանի հետ կնքված վարձակալության պայմանագրերի ժամկետները երկարաձգել մինչև 2032 թվականի փետրվարի 2-ը:

3. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային

սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների՝

1)0,85 հեկտար այլ հողատեսքի /սեփականության իրավունքի վկայական 2343296, կադաստրային ծածկագիր 04-065- 0115-0013/,

2)1,77 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2343297, կադաստրային ծածկագիր 04-065- 0115-0014/,

3) 1,75 հեկտար երրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2343295, կադաստրային ծածկագիր 04-065- 0114-0003/,

4) 1,49 հեկտար չորրորդ կարգի վարելահողի /սեփականության իրավունքի վկայական 2343298, կադաստրային ծածկագիր 04-065- 0115-0012/ նկատմամբ 2007 թվականի մայիսի 24-ին քաղաքացի Դոնարա Ռաֆիկի Ըխտոյանի հետ կնքված վարձակալության պայմանագրերի ժամկետները երկարաձգել մինչև 2032 թվականի մայիսի 24-ը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N45-Ա

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 15 ՇԵՆՔԻ ՔԱՄՈՒՑ ՎՆԱՍՎԱԾ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017 թվականի հուլիսի 24-ի N14-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված ծախսերից 500 000 ՀՀ դրամ հատկացնել 2017 թվականի հուլիսի 23-ին երեկոյան ժամը 19: 53- ին ուժեղ քամու հետևանքով Երևանյան խճուղու թիվ 15 շենքի տանիքին պատճառված վնասի / մոտ 200 քառակուսի մետր/ վերականգնման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ	ՏՈՆՈՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԵՍԱՅԱՆ
ԳԱԳԻԿ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿԱՐԵՆ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՊԱՅՔԱՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2017 թվականի N46-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի, 18-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի , 22-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 1-ի N5-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի համեմատաբար սոցիալապես բարվոք վիճակում ապրող, դիմումատու Գուրգեն Զալիբեկի Միրիբյանի ընտանիքնին չտրամադրել դրամական օգնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

		Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՎԵՏԻՔ	ՏՈՆՈՅԱՆ			
ԱՐՏԱԿ	ԵՍԱՅԱՆ			
ԳԱԳԻԿ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ			
ԿԱՐԵՆ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՄԲԱՐՅԱՆ			
ՊԱՅՔԱՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՎՈԼՈԴՅԱ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**